էին զծագումն փրկութեան ճշմարիտ Արեգականն և կրկնակի ընդ ձեռն Ուռնայրի զերագոյն լուսաւորեցան։ Եւ այս 'ի միում ժամանակի եղեն հրաշք Աստուածուստ։ Եւ էր Ուռնայր արքայ Աղուանից քեռայր Շապհոյ պարսից արքայի, քաջազօր այր որ 'ի մեծամեծ պատերազմունս զհոյակապ անուն ժառանգեաց, 'ի մէջ Հայաստանեայց նշան յաղթութեան կանգնեալ առնու և զվերստին ծնունդն 'ի սրբոյն Գրիգորէ Հայոց Լուսաւորչէ, զայ լուսազգեստեալ 'ի սուրբ Հոգւոյն՝ առաւել Լուսաւորէ զԱղուանս, կայ մնայ որդի մշտնջենական լուսոյն և վախճանէ զմարդկային կեանս։ Իսկ զկնի սորին մահուանն խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս 'ի կաթուղիկոսութիւն իւրեանց, զի Ուռնայր արքայն մեր խնդրեաց 'ի սրբոյն Գրիգորէ նորին ձեռնադրութեամբն լինել եպիսկոպոս աշխարհին իւրոյ, որ և այսու կանոնաւ կացին աշխարհն Հայոց և Աղուանից համակամ եղբայրութեամբ և անքակ ուխտիւ մինչև ցայսօր»։

Աղուանից աշխարհի պատմիչ Մովսէս Կաղանկատուացի՝ Մեսրովբ թարգմանչի յԱղուանստան գալու, քարոզելու, Աղուանից Երեմիայ կաթուղիկոսի ժամանակ, Աղուանից գիր ստեղծելու, և եկեղեցիք և դպրոցներ հաստատելու և փրկչական սուրբ Խաչի մասն բերելու համար՝ այսպէս գրէ (հատ. ա. գլ. իէ, և իբ. երես 69-73.) (1860 Մոսկուայ)։

«Եւ եղև յետ վկայութեանն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի՝ բարբարոսական ազգք կողմանցն արևելից վերստին 'ի դիւցախելաւ կռամոլութիւնս կործանեցան. և բազում ուխտս ատրուշանաց կատարելով՝ յարուցին հալածանս 'ի վերայ քրիստոնէից։ Մի ոմն 'ի նախեղելոց վարդապետաց, որ 'ի Հոգւոյն սրբոյ խնամոցն նշանագիր երից ազգաց առնէր՝ Հայոց, Աղուանից և Վրաց, և այնուհետև ի սուրբն երթայր յերուսաղէմ մատուցանել ուխտադրութիւն, անտի դարձեալ աշակերտօքն՝ ընդ ինքեան ունելով զխաչն արծաթեղէն ոսկեխաղած տեսակաւ, յորում ի տէրունեան Խաչէն էր մասնաւորեալ, և անցեալ ընդ Հայաստան՝ ճանապարհ առնէ հասանել ի սահմանս արևելից ի գաւառն Ուտիական, և մտեալ բնակէր ի ճաղճաղուտ տեղիս և ի լուռաբոյս մօրս, առ տեղեաւն որում Գիսն կոչեն, և նորո-